Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Հայաստանի ժողովրդական ճարտարապետությունը զարգացման ինքնատիպ պայմաններում ստեղծել է բազմազան ու հարուստ արժեքներ՝ բնակելի տներ, արտադրական, տնտեսական և կենցաղային բնույթի շինություններ, համակառույցներ և բնակավայրեր:

Ողջ միջնադարում, նույնիսկ ավելի ուշ, ամենուրեք տիրապետել է փայտե կամ չայրվող ծածկով գլխատան համակառույցը, թեև առանձին տաք շրջաններում շարունակում էին զարգանալ հարթածածկ (Մեղրի, Սասուն), աշտարակաձև (Սասուն, Գամիրք) և փայտակերտ (Համշեն, Խոտորջուր, Սև ծովի փոքրասիական առափնյա գաղթավայրեր) բնակարանները: Բնակելի համակառույցի մեծությունը, կազմը և ձևավորումը պայմանավորված էին տվյալ երկրամասի բնական պայմաններով, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով և մշակութային ավանդույթներով: Հին տիպի բնակարաններն ունեցել են աչքի ընկնող ներքին հարդարանք (քանդակազարդ փայտամասեր, բուխարի, ձևավոր խորշեր), մինչդեռ արտաքինից հաճախ պարզունակ ծավալներ են ունեցել: Ժողովրդական ճարտարապետության լավագույն կառույցներ են ստեղծել փորձառու վարպետները: Դրանց շարքերից են դուրս եկել միջնադարյան ճարտարապետներից շատերը, որոնք հիշյալ կառույցների ձևերն օգտագործել են մոնումենտալ հոյակապ շենքեր կառուցելիս: Դրա-

Նախնադարյան կլոր կացարան

նով էլ մեծապես պայմանավորված էր ժողովրդական և մասնագիտական ստեղծագործությունների սերտ կապը և փոխադարձ ներգործությունը:

Տնտեսական նոր հարաբերությունների ազդեցությամբ առանձին վայրերում ուշ միջնադարից, իսկ XIX դարի կեսերից ավելի մեծ չափով վերափոխվում էին միջնադարյան գյուղերն ու նրանց շինությունները: Լեռնային խուլ վայրերում այդ տեղի էր ունենում աննկատ, բայց մայրուղիներին և տնտեսական զարգացող կենտրոններին մերձակա վայրերում (Ղարաբաղ, Լոռի, Ղափան) կառու-



Գլխատան ինտերիեր

ցապատման նոսրացման, լանջավոր կտուրների ու ներքին կանաչապատման հանդես գալը տեղի էր ունենում դաշտավայրերին համընթաց: Արևմտյան Հայաստանում ցրված կառուցապատումն ավելի վաղ ժամանակներից առկա էր քաղաքամերձ վայրերում, ինչպես նաև Սասունում, Համշենում և մի քանի այլ գավառներում՝ տեղանքի կտրվածության կամ որոշ ապահովության հետևանքով:

Հազարաշեն ծածկ

Աղյուսաշեն բնակելի տուն Երևանի «Կոնդ» թաղամասում

Հատված Դիլիջանի թանգարանից

՝Քաղաքային բնակարանների տարբերակումը գյուղի տներից դրսևորվել էր դեռևս ուրարտական շրջանում, երբ հանդես էին եկել բազմաբաժին և հարկաշատ տները: Բայց անգամ միջնադարյան քաղաքներից շատ քիչ բան է մեզ հասել: Այդպիսի կառույցներում ուշադրություն էր դարձվում նաև արտաքին հարդարանքին: Զարգացած միջնադարում, հատկապես Անիում կիրառվում էին ձևավորման նաև արևելյան տարրեր, ինչպես՝ քարի բազմագույն ձևավոր

շարվածք, քարի ու փայտի գորգանման քանդակազարդում, վանդակապատ մեծ բացվածքների կիրառում և այլն: Այդ ավանդույթները հայ շինարարները զարգացրել են ինչպես մայր երկրի հարավային և արևելյան շրջաններում, այնպես էլ Մերձավոր ու միջին արևելքի երկրներում. (առանձնապես ուշագրավ է XVII դարից հանդես եկած Նոր Ջուղա ավանը): XVI — XIX դդ. տեղական և արևելյան ոճի նույնպիսի միահյուսված դրսևորման օջախներ էին Հին Ջուղան, Երևանը, Նախիջևանը, Օրդուբադը, Ագուլիսը, մասամբ նաև Վանը:

XIX դարը քաղաքային ճարտարապետության համար, հատկապես Արևելյան Հայաստանում, մեծ փոփոխությունների դարաշրջան էր: Վերոհիշյալ քաղաքների ու ավանների կողքին հանդես եկան իրենց ուրույն դիմագիծն ունեցող Ալեքսանդրապոլը, Կարսը, Նոր Բայազետը (Կամո), Էջմիածինը, Դիլիջանը, Գորիսը, Շուշին և Մեղրին: Դրանցից անբաժան էր գերակշիռ հայ բնակչություն ունեցող Թիֆլիսի գաղթօջախը: Քաղաքային ճարտարապետության մեջ աչքի ընկնող արևելյան ոճն այս շրջանում իր դիրքերը զիջեց տեղական ավանդույթների և եվրոպական մշակույթի ու տեխնիկայի վրա խարսխված նոր ուղղությանը: Այնուամենայնիվ արտաքին ու ներքին հարդարանքի, ինչպես և կառուցվածքի արևելյան որոշ տարրեր հաջող կերպով ընդգրկվեցին նոր ժամանակների քաղաքների ճարտարապետության մեջ: Առաջնակարգ նշանակություն ստացան շենքերի փողոցի ճակատները, թեև ծայրամասերում շատ դեպքերում պահպանվում էր տները դրսից մեկուսացնելու արևելյան ավանդույթը: Կենտրոնական փողոցները խտանալով նմանվում էին միջանցքի: Շարունակվում էր մեծ նշանակություն տրվել բակային փայտե պատշգամբներին և նրանց ավանդական նուրբ հարդարանքին, մինչդեռ փողոցի ճակատները շատ դեպքերում եվրոպական-դասական կամ մոդեռն-էկլեկտիկ տեսք էին ստանում: Միաժամանակ տեղի էր ունենում ժողովրդական և մասնագիտական ստեղծագործությունների միահյուսման խիստ ուշագրավ մի երևույթ, որով ապահովվում էր քաղաքային ճարտարապետության ազգային ինքնատիպությունը, առանձին դեպքերում՝ նաև ոճական միասնականությունը (Գորիս, Շուշի):

Կամարակապ դարպասով բնակելի տուն Գորիսում



Փայտե խոյակ Սևանա կղզուց

Իրենց բաժանմունքներով, երբեմն էլ հարդարանքով իրարից տարբերվում էին քաղաքի ունևոր, արհեստավորական և գյուղական խավերի, ինչպես նաև եկամտաբեր տները:

Բնակավայրերի քաղաքայնացումը և կառուցապատման մասնագիտական եղանակների կիրառումն աննախընթաց չափեր ընդունեց Սովետական Հայաստանում: Չնայած դրան, աճում էր ժողովրդական ճարտարապետության պատմագիտական, արվեստաբանական, մասամբ նաև գործնական նշանակությունը: Այժմ մեծ սրությամբ դրվել և հաջողությամբ լուծվում են հուշարձանների պահպանության և վերաիմաստավորման խնդիրները, արգելոցների, բացօդյա թանգարանների, պատմական համալիրների և առանձին կառույցների համակարգում: Այդ գործի համար զարգացվում և լայնո-

Բնակելի տուն Շուշիում

րեն օգտագործվում են քարի, փայտի և մետաղների մշակման ժողովրդական արհեստները: Հենց այդ նպատակով սահմանված են հատուկ օրենքներ, գործում են պետական հիմնարկություններ և հասարակական կազմակերպություններ, որոնց կոորդինացնողն ու ղեկավարը ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությունն է:

ԳՄԴ 85.113(2Հ)1
Պ 239

ՆՈՒԲԱՐ ԾԵՐՈՒՆԻ ՊԱՊՈՒԽՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Երևան «Հայաստան» 1987

НУБАР ЦЕРУНОВИЧ ПАПУХЯН
АРМЯНСКАЯ НАРОДНАЯ АРХИТЕКТУРА
(На армянском языке)
Ереван «Айастан» 1987 г.

Խմբագիր՝ **Ա. Ս. Ոսկանյան**
Նկարիչ՝ **Լ. Խ. Խաչատրյան**
Տեխն. խմբագիր՝ **Յ. Սարգսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ս. Վ. Խաչատրյան**

Հ $\frac{4902020000}{701(01)86}$ պատվեր

© ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՉԿ

ՎՖ 01151: Տպաքանակ՝ 10000, պատվեր՝ 5181: Գինը՝ 15 կոպ.:
Ֆորմատ՝ 70×108 1/32: 0,52 պայմ. տպ. մամ., 0,49 հրատ. մամ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28
Издательство «Айастан» Ереван — 9, ул. Исаакяна 28

ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ադմիրալ Իսակովի պող. 48:
ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.